

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**  
08.03.2020



**Միրելի՛ կանայք ու աղջիկներ**

Այսօր՝ մարտի 8-ին, նշում ենք բնության զարթոնքին համահունչ զարնանային պայծառ մի տոն, որը մարմնավորում է մարդկության հաստատուն սկզբի ու մեր շարունակականության պահապան կնոջը: Ուստի, ընդունեք ջերմ ու անկեղծ շնորհավորանքներս ու միշտ հիշեք, որ բնությունն օժտել է ձեզ չհամեմատվող գեղեցկությամբ, անսպառ էներգիայով, հուզական քնքշությամբ եւ անձնուրաց նվիրվածությամբ, կենսական իմաստնությամբ եւ զարմանալի համբերատարությամբ, որի համար էլ շնորհակալ ենք ձեզ այսօր ու տարվա մնացած բոլոր օրերին: Հայ հանրության մեջ ունեցած ավանդական ու դարավոր դերերից գատ, արդի օրերում անգնահատելի է նաեւ ձեր մեծ աշխատանքն ու դերը մեր երկրի կյանքում, ամենօրյա ներդրումը նրա ներկայի եւ ապագայի զարգացման գործում:

Փոխվում է աշխարհը, փոխվում են նաեւ կանայք: Բայց ցանկանում եմ, որ ժամանակին համահունչ քայլելու հետ մեկտեղ շարունակեն հարատեւել ու չկորչել բնական եւ ի վերուստ տրված կնոջ քնքշությունը, ջերմությունը, բարությունը, հոգատարությունն ու զգացմունքայնությունը:

Թանկագի՛ն հայուհիներ, բոլորիդ մաղթում եմ զարնանային տրամադրություն ու թարմություն, չմարող ուժ եւ լիարժեք բարեկեցություն, ցանկությունների իրականացում, խաղաղություն եւ առողջություն:

**Եվ թող ոչ միայն Մարտի 8-ը, այլեւ ձեր կյանքի յուրաքանչյուր օրը լուսավորվի երջանիկ ժպիտով եւ լինեք միշտ հմայիչ, կանացի ու սիրված:**